# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. Գ Ե Ո Ր Գ Զ.Ի ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին ժամանակներս Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Վեցերորդի առողջական վիճակն սկսեց վատանալ, որի պատճառով հիվանդը գտնվում էր մասնագետ պրոֆեսորների հսկողության տակ:

Ընդլայնված կոնսիլիումը նրա մոտ գտավ ստամոքսի չարորակ ուռուցքի առկայություն՝ որովայնի խոռոչի հարևան օրգանների մետաստազներով (սերմացրվածություն), կարդիոարտերիոսկլերոզ (սրտի և անոթների սկլերոզ)՝ լրիվ առիթմիայի երևույթներով և սրտի գործունեության կոմպենսացիայի (հավասարակշռության) խանգարմամբ, թոքերի էմֆիզեմա (լայնացում) և պնևմոսկլերոզ (թոքերի սկլերոզ): Դրությունը հարաճուն կերպով վատանում էր, երբեմն առաջանում էր սրտանոթային սիստեմի գործունեության խիստ անկում (կոլապս):

Չնայած ձեռք առնված բոլոր անհրաժեշտ միջոցառումների, մայիսի 9-ին, ժամը 7-ն անց 40 րոպեին հիվանդը վախճանվեց:

Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստր՝ Ա. Ի. ԽՐԻՄԼՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ՝ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության չորրորդ վարչության պետ՝ Վ. Ա. ՄՌԱՎՅԱՆ
ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, դոկտ.-պրոֆ.՝ Լ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՍՍՌ Միության Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Ռ. Հ. ՅՈԼՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Վ. Հ. ՖԱՆԱՐՋՅԱՆ
Գիտության վաստակավոր գործիչ, դոկտ.-պրոֆ.՝ Տ. Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
Դոկտ.-պրոֆ.՝ Ս. Ս. ՇԱՐԻՄԱՆՅԱՆ
Դոկտ.-պրոֆ.՝ Ա. Տ. ՍԻՄՈՆՅԱՆ
Դոցենտ՝ Ա. Ա. ՔԱԹԱՆՅԱՆ
Պոլիկլինիկայի գլխավոր բժիշկ՝ Ի. Ռ. ՂԱՐԻԲՅԱՆ

Ներկա էին՝

Էջմիածնի միաբանությունից, Գերագույն Հոգևոր խորհրդի նախագահող անդամ՝ գերաշնորհ Տ. ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ,
Հոգեշնորհ Տ. ԳԵՈՐԳ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՎԱԹՅԱՆ,
Գերագույն Հոգևոր խորհրդի անդամներ՝ Տ. Ս. Ի. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ և Տ. Մ. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ:

9 մայիսի 1954 թ.